Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1473

Յօդուտ Զուշուայ Որբանոց-Դպրոցի.

01 MAR 20
01 FEB 2007

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազատ փոխադր. ռուսերենից

ԶԱՒԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱԳՈՒ
Տպարան Եղբ. Ղազարեանների
1906.

342
Ղ-84

34503
12 5 APR 2013
3424
Ժ-84
300
1250-ԶԿ
1003/11679
Տ+Ա.Ն
ԺԷ.Ն
Ն Ե

Յօգուտ Զուշակայ Որբանոց-Դպրոցի.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազատ փոխադրութեամբ

ՉԵՐԼԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱԳՈՒ
Տպարան Եղբ. Ղազարեաններէ
1906.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. C.C.P.A Публичная Библиотека
7/XI-1922
Ս. ՄԷՍՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ «МЕЛАКЕТ»
ТИФЛИСЪ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՄԱՍԻՆ

Ինչպէս յայտնի է հայ հասարակութեան ազգիս Վեհափառ Հայրապետի մայիսի 10-ի և յունիսի 7-ի սրբատառ կոնդակով վերականգնուած է մեր ժողովրդական եկեղեցւոյ ընտրողական իրաւունքը։ Բայց քանիսի համար պարզ և հասկանալի է, թէ ինչպէս պիտի կատարուին ընտրութիւնները։ Ի նկատի ունենալով անցեալում եղած ընդհանրապէս անկանոն, անգոյն և կամայականութեանց զոհ դարձած ժողովները, ապագայում այդ տեսակի չարիքներից խուսափելու համար, աննպատակ չենք համարում գէթ հարևանցօրէն և համառօտ կերպով ծանօթացնել հայ հասարակութեան աւելի ազատ և լուսաւոր երկրներում կատարուող ընտրութեանց մասին։ Որովհետև իսկապէս հնարաւորութիւն չկայ բոլոր քաղաքացիներին և գիւղացիներին ի մի հաւաքելու և միասին խորհելու ազգային կամ հասարակական խնդիրների մասին, ընդունուած է երկիրը բաժանել շրջանների և ամէն մի շրջանում կատարել ներ-

կայացուցիչների ընտրութիւնները և այդ դանազան շրջաններից ընտրուածներին էլ ի մի հաւաքելով կազմել այսպէս կոչուած ներկայացուցչական կամ պատգամաւորական համաժողովը, որը և պէտք է խորհէ ժողովրդի կարիքների մասին, որոշ կարգ ու կանոն սահմանէ և հետևի, որ այդ կարգ ու կանոնը կեանքի մէջ չ'մնայ «ձայն բարբառոյ յանապատի»։

Ժողովրդական պատգամաւորական ընտրութիւնները կատարւում են տարբեր ձևերով։ Եթէ բոլոր մարդիկ միմիանց նման մտածէին և նոցա կարիքներն ու շահերը միատեսակ լինէին, այն ժամանակ գործը կ'հեշտանար. ամէնքն էլ կ'աշխատէին ընտրել ամէնաընդունակ և խելօք մարդուն. բայց այսպէս չէ իրականութիւնը։ Ժողովուրդը իւր մտաւոր և տնտեսական շահերի տեսակէտից բաժանուած է դասակարգերի. օրին. գիւղացիութիւն, բանւորութիւն, երկրագործներ, աստիճանաւորներ, գործակատարներ, վաճառականներ, ազատ զբաղմունք ունեցողներ (իրաւաբան, բժիշկ, ուսուցիչ). իւրաքանչիւր դասակարգն էլ ունի իւր եկամուտի տարբեր աղբիւրն ու ապրելու եղանակը։ Բանւորն ապրում է իւր ճակատի հալալ քրտինքով։ Գործարանատէրերը, վաճառականներն իրենց եկամուտով կամ աշխատանքով. ազատ զբաղմունք ունեցողներն իրենց ռոճիկով կամ վարձատրութեամբ և այլն։ Դասա-

կարգային այս շահերն ահա, ինչպէս տեսնում ենք, ոչ միայն տարբեր այլ և հակառակ են միմիանց. ուստի և լաւ չէ, որ բանւորի համար ընտրուի գործարանատէրը, իսկ գիւղացու համար կալուածատէրը, որովհետև գործարանատէրն ու կալուածատէրը որպէս պատգամաւորներ ըստ մեծի մասին կ'պաշտպանեն ոչ թէ ժողովրդի այլ իրենց դասակարգային շահերը։ Ժողովրդական ընտրութիւնները ճշմարիտ և արդարացի դարձնելու համար, անհրաժեշտ է վերականգնել ընդհանուր քաղաքացիների կատարեալ հաւասարութեան իրաւունքը. հարկաւոր է, որ բոլոր չափահաս քաղաքացիներն էլ 20 կամ 21 տարեկանից սկսած տղամարդ թէ կին ունենան ժողովներին կամ ընտրութիւններին մասնակցելու հաւասար իրաւունք (ի բաց առեալ հոգեկան հիւանդները և այլն) ունևոր թէ չունևոր, գրագէտ թէ անգրագէտ ունենան մի մի ձայն... հարկաւոր է պարզ որոշել թէ քանի հոգու կամ քաղաքացու կողմից պէտք է մի պատգամաւոր ընտրուի և ամէն մի նոր ընտրութեան ժամանակ թիւրիմացութիւններից խուսափելու համար, անհրաժեշտ է ըստ կարելւոյն ճիշտ հաշուել իւրաքանչիւր շնչանի բնակիչների աւելացած ու պակասած ձայնաւոր քաղաքացիների կամ ծխականների թիւը։ Ժողովրդի համար շատ կարևոր է իմանալ, թէ ինչպէս պէտք է կատարէ ընտրութիւնները, որ իւր ձայնը կարողանայ քիչ թէ շատ

լսելի դարձնել։ Ես կ'յիշեմ այստեղ ընտրութեանց այն եղանակը, որն արդէն լուսաւորեալ երկրներում ընդունուել և գործադրւում է. այդ այսպէս կոչուած ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՒԱՍԱՐ, ՈՒՂՂԱԿԻ կամ ԱՆՄԻՋԱԿԱՆ և ԴԱՂՏՆԻ ընտրողական իրաւունքի սկզբունքն է։ ԸՆԴՀԱՆՈՒՐ է կոչւում ընտրութիւնը, երբ ամէն մի չափահաս քաղաքացի, առանց սեռի և դասակարգի խտրութեան իրաւունք է ունենում ընտրելու և ընտրուելու։ Ամէն մի ազգի մէջ միշտ մեծամասնութիւնը կազմում է զրկուած բանւորն ու աղքատ գիւղացին։ Եթէ ընտրութեան իրաւունքը ԸՆԴՀԱՆՈՒՐ է, այսինքն իւրաքանչիւր չափահաս մարդ իրաւունք ունի ընտրելու և ընտրուելու, այն ժամանակ թէ բանւորն և թէ գիւղացին հնարաւորութիւն կունենան իրենց ձայնը լսելի դարձնելու ամէնքին. իսկ երբ ընտրողական իրաւունքը վերապահուի միայն երջանիկներին կամ մի երկու դասակարգի և ձայնի իրաւունք ունենան միայն նրանք որոնք հարուստ են, կալուածատէր են և կամ կրթական ցէնզ ունին, շատ բնական է, որ բանւորի և գիւղացու ձայնը կըխեղդուի։

Ընտրողական իրաւունքի միւս ձևն է ՀԱՒԱՍԱՐ կոչուածը. այսինքն թէ ամէն մի ընտրող, ինչ դասակարգից էլ որ լինի, անպատճառ ունի մի ձայնի իրաւունք. եթէ օրինակ կալուածատէրը կամ գործարանատէրը կամ ցէնզաւորը,

մի խօսքով արտօնեալները երկու կամ աւելի ձայնի իրաւունք ունենան, կարող են միշտ էլ անց կացնել իրենց պատգամաւորներին, ինչպէս Բէլգիայումն է, ուր մինչև այժմ էլ գիւղացիութիւնն ու բանւորութիւնը դասակարգային կռիւ են մղում ՀԱՒԱՍԱՐ ընտրողական իրաւունքի համար. մի մարդ — մի ձայն. ահա ճնշուած և զրկուած ժողովրդի արդարացի պահանջը։

Ընտրողական իրաւունքի երրորդ ձևն է ՈՒՂՂԱԿԻ կամ ԱՆՄԻՋԱԿԱՆ կոչուածը. ուրիշ խօսքով, երբ ժողովուրդը ինքն է անմիջապէս ընտրում իւր պատգամաւորներին. որն անշուշտ աւելի լաւ է քան երկաստիճան կոչուածը. որովհետև առաջին դէպքում ժողովուրդը ինքն է ձայն տալիս իւր ընտրեալին, իսկ երկրորդ դէպքում ժողովրդից ընտրուած ներկայացուցիչներն են ընտրում պատգամաւորներ, որոնք և յաճախ կարող են ձայն տալ այնպիսիներին, որոնց ժողովուրդը երբէք չէր ընտրի որպէս պատգամաւոր։ Ընդհանրապէս ամէնքի թէ քաղաքացու, թէ բանւորի, թէ գիւղացու համար լաւ է, որ ընտրութիւնները լինին ՈՒՂՂԱԿԻ, որպէս զի կարելի լինի (թէև ոչ ամէն դէպքում) ցանկացած մարդուն ձայն տալ։

Ընտրողական իրաւունքի վերջին ձևն է ԴԱՂՏՆԻՆ. այսինքն թէ ոչ ոք չպէտք է իմանայ թէ ով է ում ձայն տալիս, որպէս զի ընտրողը միանգամայն ազատ լինի արտաքին ճնշումներից։

Ամենորդ չէ յիշատակել, որ ընտրութիւններն առհասարակ պէտք է նշանակել կիւրակի կամ տօն օրերը, երբ ամէնքն ազատ են սովորական աշխատանքից և կարող են մասնակցել ժողովներին. որպէս զի պատգամաւոր կարողանայ ընտրուել հասարակ, բայց գործին ծանօթ – բանիմաց գիւղացին և բանուորը, պէտք է որոշ ռոճիկ նշանակել ժողովրդական պատգամաւորներին. նախ որպէս զի նա չզրկուի իւր սովորական աշխատանքից և երկրորդը՝ կարողանայ հանգիստ սրտով նուիրուել պատգամաւորական պարտականութիւններին։ Բայց այս դեռ բոլորը չէ. մնում է ամէնագլխաւոր և ամէնանշանաւոր հարցը. ում ընտրել պատգամաւոր և ինչպիսի հրահանգ տալ։ Բաւական չէ որ ունենանք ընտրողական իրաւունք, այլ և պէտք է կարողանանք օգտուել նրանից։

Ժողովուրդը կարող է օգտուել ընտրողական իրաւունքից այն ժամանակ, երբ նա ընտրէ այնպիսի մարդկանց, որոնք քաջատէս գիտեն, թէ ինչպիսի կարգեր և օրէնքներ են պէտք, որ ժողովրդի մէջքի վրայի բեռը, նրա ուսերի վրայ ծանրացած լուծը, մի խօսքով նրա դժոխային կեանքը մի քիչ թեթևանայ և տանելի դառնայ։ Այն ժողովուրդը, հասարակութիւնը կամ ազգը կարող է բարելաւել իւր կեանքը, որն ունի իւր մէջ գիտակցող, ժողովրդի, իւր ազգի և առհասարակ ճնշուած դասակարգի շահերը հասկացող

մարդիկ, որոնք և կարող են իրենց պատգամաւորներին տալ ճիշտ և ուղիղ հրահանգներ յօգուտ ժողովրդի և ազգի ճնշուած ու զրկուած դասակարգի. հետևաբար ամէն մի քաղաքացի պէտք է աշխատի նախօրօք պարզել այս և նման տեսակի հարցեր, որոնք անհրաժեշտ են ինչպէս ժողովրդի, այնպէս և ամէնքի բարօրութեան համար։ Անշուշտ շատ շատերը կ'դժուարանան մէնակ վրճռել. ուստի անհրաժեշտ է վաղօրօք նախապատրաստական ժողովներում խորհրդակցել ուրիշների կամ ընկերների հետ, այն էլ ոչ թէ մի կամ երկու անգամ, այլ որքան հարկաւոր կլինի կամ ժամանակ կ'պահանջուի այդ հարցը բազմակողմանի ձևով ուսումնասիրելու և պարզելու. ցանկալի և անհրաժեշտ է, որ այդ և նման տեսակի հարցերը քննուին ոչ միայն ժողովներում – բանաւոր, այլ և գրաւոր – լրագիրներում և նոյն իսկ առանձին գրքոյկներով. մի խօսքով անհրաժեշտ է ամէնաընդարձակ և ամէնալայն չափով մտքերի ազատ փոխանակութիւն։ Թէև մտքերի ազատ փոխանակութիւնը, ազատ ժողովները մեզանում դեռ չեն սրբագործուած և մենք դեռ հնարաւորութիւն չունենք ազատ խօսելու, գրելու, ժողովներ անելու, բայց և այնպէս ով սիրում է և որի հոգուն ու սրտին մօտիկ է իւր և իւր հայրենիքի շահը, մարդկային կեանքի յառաջադիմութիւնը, ճշմարիտ բարգաւաճումը և զարգացումը, կամայ ակամայ ժամանակաւորա-

պէս օգտւում է եղածից հաշտուելով փոքրագոյն չարիքի հետ։

Մտքերի ազատ փոխանակութիւնը անհրաժեշտ է, որպէս զի անհատական կարծիքները հրապարակ գան և որքան կարելի է զտուի, պարզուի ժողովներում արծարծուած հարցը. ճշմարիտ է այստեղ էլ առաջ կ'գան շատ դժուարութիւններ, որովհետև մի քանիսը պիտի հասկանան այսպէս, մի քանիսն այնպէս և նոյն իսկ երբեմն կարծիքներն այնքան տարբեր, որ այլևս շատ շատերի համար անտանելի կ'լինի խօսակցութիւնը կամ մտքերի փոխանակութիւնը շարունակել։ Ի հարկէ չկայ երկիր կամ տեղ, ուր ամէնք էլ միատեսակ մտածեն. մի տան մէջ հայր, մայր, որդի նոյն իսկ յաճախ տարբեր մտածողութիւն և հասկացողութիւն են ունենում այս կամ այն խնդրի նկատմամբ։ Այս ընդունելով հանդերձ, որպէս զի ժողովներում շատ շփոթութեանց և դժուարութեանց չ'հանդիպենք, հարկաւոր և անհրաժեշտ է օր առաջ մի քաղաքում, գիւղում, շրջանում, գործարանում եղող միանման մտածողները կամ միևնոյն համոզմունքների և ցանկութիւնների տէր մարդիկ միանան և կազմեն մի ՄԻՈՒԹԻՒՆ և առանձնապէս խորհրդակցեն, թէ ինչ պէտք է անեն և ինչ պիտի պաշտպանեն իրենց պատգամաւորները համաժողովներում. և այսպէս ամէն մի ընտրողական շրջանում միևնոյն հայեացքների

տէր մարդիկ պէտք է խմբուեն, մի համերաշխութեան գան և այս շրջանային միութիւնները ամէնքը միասին կազմեն մի աւելի մեծ մարմին, որպէս զի հեշտ լինի միօրինակ մտածողների ամբողջ ընկերութեան կողմից թեկնածուներ ընտրել և դիւրութեամբ այդ ընտրեալների թեկնածութիւնն անցկացնել ժողովներում ձայների մեծամասնութեամբ։

Այս ձևով կազմուած միութիւններն ահա իրենց առանձին ծրագիրներով և թեկնածուներով ընտրութիւններին կարող են մասնակցել և որ ընկերութեան թեկնածուներն աւելի ձայն ստացան, նրանք էլ ընտրուած կ'համարուեն։

Զանազան շրջանների կամ նոյն իսկ զանազան քաղաքների միութիւններն ունենալով միևնոյն ուղղութիւնն ու ծրագիրը, գործը հեշտացնելու համար պէտք է միանան և կազմեն այսպէս կոչուած ՄԻՈՒԹԻՒՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ (союзъ союзовъ)— իրենց երկրի մէջ միևնոյն կամ նման ուղղութեան հետևող մարդկանց համար։

Այս միութիւնները կամ կազմակերպութիւններն են որ կոչւում են կուսակցութիւններ իրենց առանձին ծրագիրներով։

Այսպիսի կուսակցութիւններ ամէն երկրում կարող են լինել՝ երկուս, երեք և աւելի։

Լուսաւորեալ երկրներում (Եւրոպայում) դրանք կազմակերպւում և դառնում են ժողովրդա-

կան կամ հասարակական գործոններ, ունենալով իրենց յատուկ կանոնադրութիւնը, կասսան, ժողովարանը, դպրոցները, մատենադարանները, օրաթերթերը, արհեստանոցները մի խօսքով իրենց ներքին անկախ ազատ կառավարութիւնը... այս կուսակցութիւններն աշխատում են ոչ միայն ժողովրդից ընտրուած ներկայացուցիչների ընդհանուր օրէնսդիր համաժողովներում կամ պարլամենտներում ունենալ իրենց ներկայացուցիչները, այլ և զանազան միջոցներով հնարաւոր եղածին չափ ընդհանրացնում կամ ժողովրդականացնում են իրենց ծրագիրները, ամէն տեղ և ամէն քայլափոխում պահպանելով իրենց անդամների շահերը։ Եթէ ընտրութիւնները կատարւում են այնպիսի երկրում, ուր գոյութիւն ունեն մի քանի կազմակերպուած կուսակցութիւններ, այդ ընտրութիւններն աւելի արդարացի կլինին, եթէ ի նկատի առնուի հետևեալ կարևոր հանգամանքը. բացադրենք օրինակով. ենթադրենք մի որ և իցէ երկրում ընտրողների թիւը հասնում է 700,000 ի, 400.000-ը ենթադրենք պատկանում է մի որոշ կուսակցութեան. 200,000-ը մի ուրիշ. իսկ 100,000 $^1/_3$ կուսակցութեան. եթէ 100,000 հոգուց որոշուած է ընտրել մի պատգամաւոր, այդ երկրից ուրեմն պիտի ընդրուին 7 հոգի. այսպիսով եթէ ընտրութիւնները կատարուին մի ընդհանուր ժողովով, ուր պէտք է ներկայ լինին ամէնքը, ձայ-

ների քիչ առաւելութեամբ պատգամաւորներ կընտրուին միայն մի կուսակցութեան թեկնածուներ, որովհետև մեծամասնութիւնն այդ կուսակցութեան կողմն է. այդ ձևի ընտրութիւնը ուղիղ և արդարացի չէ։

Եթէ որոշւում է որ 100,000 քաղաքացին մի պատգամաւոր տայ—այն ժամանակ յանուն արդարութեան 400,000 հոգուց բաղկացած կուսակցութիւնը պէտք է տայ չորս պատգամաւոր—200,000-ը—2 պատգամաւոր, իսկ 100,000-ը—մի պատգամաւոր—որոնց ընդհանուր թիւը դարձեալ կլինի եօթը և որ գլխաւորն է բոլոր կուսակցութիւններն է իրենց կուսակիցների աւելի կամ պակաս համեմատական չափով պատգամաւորներ կունենան և համաժողովներում իրենց թուի համապատասխան էլ ձայն... հետևաբար անհրաժեշտ է, որ կուսակցութիւնները, որքան էլ որ շատ կամ քիչ լինեն նոքա, ընդրութիւնների ժամանակ ի նկատի ունենան ամէն մի կուսակցութեան անդամների կամ հետևողների թուի համեմատական չափը—եթէ ի հարկէ ուզում են, որ համաժողովներում հնչուի ժողովրդի ձայնը և ընտրեալները լինեն ժողովրդի ընդրեալներ. նրանք ովքեր ի սրտէ կամենում են որ ըստ կարելոյն ժողովրդական համագումարը լինի ամբողջ ժողովրդի կամքի և ցանկութեան արտայայտութիւն և անպատճառ վայելի համայն ժողովրդի համակրութիւնը,

պահանջում են ոչ միայն ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՒԱՍԱՐ, ՈՒՂԻՂ և ԳԱՂՏՆԻ ընտրողական իրաւունք, այլ և վերոյիշեալ համեմատական չափը, ինչպէս Դանիայում, Բէլգիայում, Սերբիայում, Շվէյցարիայում և այլն։

Ծանօթութիւն. Ժողովրդական ներկայացուցչական ընտրութիւնների մասին աւելի ծանօթութիւն ձեռք բերել ցանկացողները կարող են օգտուել հետևեալ գրքոյկներից. 1) В. В. Водовозовъ. Всеобщее избирательное право թարգ. Միքայէլեանի. 2) Карлъ Каутскій. Развитіе формъ государства. 3) Лассаль. Сущность конституціи. 4) С. Г. Сватиховъ. Созывъ народныхъ представителей. 5) Ф. Мускатблитъ. Народное представительство. 6) Г. Новоторжскій. Что такое правовое государство. 7) І. Я. Избирательное право և այլն։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅ ՄԱՍՆ
ԳՐԱԳԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0207766

34.503

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.